ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# Հ Ա Ր Կ Ա Յ Ի Ն  ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

## Ե Կ Ա Մ Տ Ա Յ Ի Ն   Հ Ա Ր Կ

Եկամտային հարկ - Գրքույկում շարադրված են եկամտային հարկով հարկման ընդհանուր մոտեցումները և առանձնահատկությունները:

ք. Ստեփանակերտ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Եկամտային հարկը և եկամտային հարկ վճարողները ..........................3

2. Հարկվող եկամուտը ...............................................................................4

3. Համախառն եկամուտը և նվազեցվող եկամուտները ............................5

4. Եկամտային հարկի հաշվարկումը և վճարումը ......................................8

5. Եկամտային հարկի հաշվետվությունների բացառապես էլեկտրոնային եղանակով ներկայացումը և հարկի վճարման ժամկետները .......12

6. Եկամտային հարկի կանխավճարների կատարումը ............................15

7. «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի պահանջները խախտելու համար սահմանված պատասխանատվությունը ....................16

8. «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելու հետ կապված, օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն ընդունված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 28-ի N 27-Ն որոշմամբ սահմանված կարգի կիրառման մի քանի հարցերի վերաբերյալ ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի 03.02.2014թ. N 1 պաշտոնական պարզաբանումը .........................18

9. 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկմամբ պայմանավորված ամենամյա արձակուրդի գումարների հարկման վերաբերյալ ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի 03.02.2014թ. N 2 պաշտոնական պարզաբանումը ...................................23

10. 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկմամբ պայմանավորված ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարների հարկման վերաբերյալ ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի 03.02.2014թ. N 3 պաշտոնական պարզաբանումը ........................28

11. Հավելվածներ .......................................................................................31

## 1. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԸ ԵՎ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ

Եկամտային հարկը ԼՂՀ պետական բյուջե (այսուհետ՝ բյուջե) վճարվող ուղղակի հարկ է, որը գանձվում է ֆիզիկական անձանցից հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամտից:

Ֆիզիկական անձը՝ ԼՂՀ քաղաքացին, օտարերկրյա քաղաքացին, քաղաքացիություն չունեցող անձը, այդ թվում անհատ ձեռնարկատերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում եկամտային հարկ է վճարում, եթե նա՝

• ԼՂՀ ռեզիդենտ է՝ հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը) սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ԼՂՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, *կամ*՝ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ԼՂՀ-ում (մասնավորապես՝ եթե ԼՂՀ-ում է գտնվում տունը կամ բնակարանը, որտեղ բնակվում է նրա ընտանիքը և գտնվում է նրա անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը), *կամ*՝ որը գտնվելով ԼՂՀ-ում պետական ծառայության մեջ, ժամանակավորապես աշխատում է ԼՂՀ տարածքից դուրս, և ԼՂՀ տարածքում կամ նրա սահմաններից դուրս ստացել է հարկվող եկամուտ,

• ոչ ռեզիդենտ է և ղարաբաղյան աղբյուրներից ստացել է հարկվող եկամուտ:

## 2. ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏԸ

Հարկվող եկամուտը ֆիզիկական անձի հաշվետու ժամանակաշրջանի համախառն եկամտի և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է (եթե Օրենքով հարկվող օբյեկտի որոշման առումով այլ բան սահմանված չէ):

Օրենքով սահմանված նվազեցումներ են՝

- նվազեցվող եկամուտները,
- ծախսերը:

## 3. ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՈՒՏԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի ստացած (ստացման ենթակա) բոլոր եկամուտների հանրագումարն է: Եկամուտ է համարվում ձեռնարկատիրական գործունեությունից, աշխատանքային պայմանագրերի շրջանակներում ստացման ենթակա, քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կամ ցանկացած այլ հիմքով ստացված գույքը (դրամական և բնամթերային (ոչ դրամական) ձևով եկամուտները): Սակայն եկամտի որոշ տեսակներ՝ ներառվելով համախառն եկամտի մեջ, միաժամանակ նվազեցվում են այդ եկամտից, օրինակ՝

• օրենսդրության համաձայն վճարված նպաստները (բացառությամբ՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստների).

• օրենսդրության համաձայն վճարված բոլոր տեսակի կենսաթոշակները (բացառությամբ՝ սահմանված կարգով կենսաթոշակների կամավոր կուտակային համակարգին մասնակցության շրջանակներում վճարված կենսաթոշակների).

• ԼՂՀ օրենսդրության համաձայն սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակներում վճարված պատվովճարները, դրամական օգնություններն ու օժանդակությունները.

• ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված նորմաների (չափերի) սահմաններում աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) հետ կապված փոխհատուցման վճարները (բացառությամբ՝ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների).

• ԼՂՀ օրենսդրությանը համապատասխան՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացված գույքը և դրամական միջոցները.

• սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի վաճառքից հարկային գործակալ չհանդիսացողներից ֆիզիկական անձանց ստացված գումարները (բացառությամբ՝ ձեռնարկատիրական գործու-

նեության հետևանքով գույքի վաճառքից ստացման ենթակա գումարների): Իրացում (վաճառք) չի համարվում առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ֆիզիկական անձի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի ներդրումը.

• ստացված վարկերի և փոխառությունների գումարները (բացառությամբ` պարտատիրոջ կողմից վարկի կամ փոխառության գումարների զիջման կամ որևէ այլ ձևով այդ գումարները չվերադարձնելու մասին պարտատիրոջ հետ համաձայնության (այդ թվում` օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը լրանալու պահին)).

• աշխատողի կամ աշխատողի ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով տրվող օգնության գումարները.

• Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ֆիզիկական անձանց անվամբ բացված նպատակային ժամկետային ավանդների համար հաշվեգրված և (կամ) վճարված տոկոսները կամ այլ հատուցումը.

• ԼՂՀ հավաքականի կազմում միջազգային մրցույթներում (մրցություններում) հաղթած մարզիկների և մարզիչների մրցանակները (պարգևները).

• ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները.

• մրցույթներում (մրցություններում) ստացված դրամական մրցանակների (պարգևների) արժեքը` յուրաքանչյուր վճարման դեպքում 10,0 հազ. դրամը չգերազանցող չափով.

• ԼՂՀ կառավարության կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի 10%-ի ուսման տարեկան վարձի փոխհատուցման գումարները.

• պետական պարգևները (մրցանակները).

• ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկ վճարողնե-րի ձեռագործ գորգերի իրացումից եկամուտները.

• գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջու-թյան ապահովագրության համար կատարված ապահովագրավճարնե-րը՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յու-րաքանչյուր ամսվա հաշվով մինչև 10,0 հազ. դրամի չափով: Գործա-տուների կողմից իրենց աշխատողների առողջության ապահովագրու-թյան համար յուրաքանչյուր ամսվա հաշվով հաշվեգրված ապահո-վագրավճարների 10,0 հազ. դրամը գերազանցող գումարները հարկ-վում են ընդհանուր կարգով՝ գումարվելով տվյալ ամսվա հաշվարկ-ված աշխատավարձին:

• շահաբաժինները և արժեթղթերից ստացված եկամուտները.

• գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված հարկ վճարողի գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված (ստացման ենթակա) եկամտի չափով, ինչպես նաև այլ գործունեությունից եկամ-տի չափով, եթե վերջինիս տեսակարար կշիռը գյուղատնտեսական և այլ գործունեությունից եկամուտների հանրագումարի մեջ չի գերա-զանցում 10%-ը և այլն:

Համախառն եկամտից նվազեցվող եկամուտների ամբողջական ցուցակին կարելի է ծանոթանալ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներում:

## 4. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

Ֆիզիկական անձը եկամտային հարկը վճարում է.

• եկամուտը վճարող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ հարկային գործակալ) միջոցով, որոնք անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին օրենքով սահմանված եկամուտներ վճարելիս (իսկ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դեպքում՝ հաշվարկելիս)՝ յուրաքանչյուր վճարման (հաշվարկման) դեպքում, կրում են եկամտային հարկը հաշվարկելու, պահելու և բյուջե փոխանցելու պարտավորություն,

• ինքնուրույնաբար՝ «Տարեկան եկամուտների մասին հաշվարկով», երբ ֆիզիկական անձի (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ) ստացած եկամուտները չեն հարկվել հարկային գործակալների միջոցով: Օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուների աշխատողները եկամտային հարկի պարտավորությունը նույնպես կատարում են ինքնուրույնաբար՝ «Եկամտային հարկի և կուտակային վճարի ամսական պարզեցված հաշվարկով»:

### Եկամտային հարկի հաշվարկման բանաձևը

• Հարկային գործակալի միջոցով՝ ամսական հարկվող եկամուտներից

Եկամտային հարկը = ամսական հարկվող եկամուտ x 21 %
Ամսական հարկվող եկամուտը = Ամսական համախառն եկամուտ - Նվազեցվող եկամուտ

> ***Ուշադրություն՝*** *Օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուների աշխատողները եկամտային հարկի պարտավորությունը կատարում են ամսական հարկվող եկամտից 21 տոկոս դրույքաչափով:*

• Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ռոյալթիներից, գույքի վարձակալությունից ստացված եկամուտներից և

ֆիզիկական անձանցից գույք ծեռքբերելու դիմաց վճարվող եկամուտներից հարկային գործակալը եկամտային հարկը հաշվարկում է առանձին 6 % դրույքաչափով, իսկ օտարերկրյա քաղաքացիների ապահովագրական հատուցումներից և փոխադրման (ֆրախտի) դիմաց վճարվող եկամուտներից 5 % դրույքաչափով՝ առանց որևէ նվազեցման:

• Բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող՝ անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների անհատ ձեռնարկատեր չհամարվող այլ ֆիզիկական անձանց վաճառքի դեպքում՝ շենքի ընդհանուր տարածքի (առանց ընդհանուր բաժնային սեփականություն համարվող ոչ բնակելի տարածքների) 10 տոկոսը, սակայն ոչ ավելի քան 500 քառակուսի մետր մակերեսը, իսկ բնակելի թաղամասերում (կամ համալիրներում) չորս անհատական բնակելի տների քանակը (այսուհետ՝ չհարկվող շեմ) գերազանցող տարածքների վաճառքից ստացված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում է 6 տոկոս դրույքաչափով՝ հաշվի չառնելով օրենքով սահմանված նվազեցումները: Ընդ որում, չհարկվող շեմը նշված չափով կիրառվում է բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի մակերեսի կամ բնակելի թաղամասերում (համալիրներում) անհատական բնակելի տների համար միայն մեկ անգամ՝ անկախ շենքի տարբեր բնակարանների կամ անհատական բնակելի տների իրացման ժամկետներից և կառուցապատող և (կամ) փայատեր ֆիզիկական անձանց քանակից:

• Տոկոսների համար եկամտային հարկը հաշվարկվում է 5 տոկոս դրույքաչափով՝ հաշվի չառնելով օրենքով սահմանված նվազեցումները:

• Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմայի շրջանակում կուտակված միջոցները օրենսդրությամբ սահմանված դեպքերում ֆիզիկական անձի կողմից միանվագ ստացման դեպքում եկամտային հարկը հաշվարկվում է 21 տոկոս դրույքաչափով ՝ հաշվի չառնելով օրենքով սահմանված նվազեցումները:

• Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմայի շրջանակում հարկ վճարողի կողմից իր համար և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կատարած կամավոր

կուտակային վճարների հաշվին սահմանված կարգով ստացված կենսաթոշակներից եկամտային հարկը հաշվարկվում է 6 տոկոս դրույքաչափով՝ հաշվի չառնելով օրենքով սահմանված նվազեցումները:

• Այն դեպքում, երբ հարկային գործակալը ֆիզիկական անձին վճարում է եկամուտ՝ առանց գրավոր պայմանագիր (օրենքով պահանջվող տվյալների պարտադիր նշումով) կնքելու (բացառությամբ՝ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց եկամուտներ վճարելիս) եկամտային հարկը հաշվարկում և պահում է 10 տոկոս դրույքաչափով՝ վճարված եկամուտների նկատմամբ՝ առանց հաշվի առնելու սույն օրենքով սահմանված նվազեցումները, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկ վճարողին վճարված եկամուտները հիմնավորվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով կամ կրճատ հաշիվ-ապրանքագրերով:

Հարկային գործակալները յուրաքանչյուր ամիս 21 % դրույքաչափով հաշվարկում են եկամտային հարկը՝ դրանից պակասեցնելով վարձու աշխատողների (ԼՂՀ քաղաքացի, օտարերկրացի) համար հաշվարկած և տվյալ ամսում պետական բյուջեի հաշվին վճարվող՝ փաստացի վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները (ժամանակավոր անաշխատունակության նպաստները պակասեցված են համարվում պակասեցման ամսվան հաջորդող ամսվա 20-ից):

• Ֆիզիկական անձանց կողմից ինքնուրույնաբար՝ հարկային գործակալի միջոցով չհարկված տարեկան հարկվող եկամուտներից

Եկամտային հարկը = տարեկան հարկվող եկամուտ x 21 %

Տարեկան հարկվող եկամուտը = Տարեկան համախառն եկամուտ - Նվազեցվող եկամուտ – Ծախսեր

• «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող և (կամ) «Առևտրի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված առևտրի հարկով հարկվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատերերը եկամտային հարկը հաշվարկում և վճարում են տարեկան հարկվող եկամուտներից

տարեկան հարկվող եկամուտ x 10 %, բայց ոչ պակաս 60 հազար դրամից

> ***Ուշադրություն՝*** *Հաստատագրված վճարների և (կամ) առևտրի հարկի օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատերերը վճարում են նվազագույն եկամտային հարկ՝ ամսական 5 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ):*

«Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձինք (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը) արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակների մասով եկամտային հարկ չեն հաշվարկում և չեն վճարում:

Անհատ ձեռնարկատերերը՝ որպես այդպիսին ստացած ռոյալթիներից, վարձակալական վճարներից և տոկոսներից եկամտային հարկը հաշվարկում են տարեկան դրույքաչափով:

> ***Ուշադրություն՝*** *Տարվա ընթացքում ֆիզիկական անձի (բացառությամբ ռեզիդենտ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց) հարկային գործակալներից ստացած այն եկամուտները, որոնցից եկամտային հարկի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում են դրանք վճարող հարկային գործակալները, չեն ներառվում տարեկան եկամուտների մասին հաշվարկում:*

# 5. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՌԱՊԵՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

| **Ներկայացնողը և հաշվետվության տեսակը** | | **Ներկայացման ժամկետը** | **Հարկի վճարման ժամկետը** |
|---|---|---|---|
| հարկային գործակալ | վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտ | վարձու աշխատողի կամ պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ամսվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց ոչ ուշ | |
| հարկային գործակալ | եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկ՝ հաշվետու ամսում ֆիզիկական անձանց վճարված(հաշվարկված) եկամտից պահված և փոխանցված եկամտային հարկի | հաշվետու ամսվան հաջորդող ***ամսվա 20-ից ոչ ուշ*** | աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկման, մնացած եկամուտների վճարման ամսվան հաջորդող ***ամսվա 20-ից ոչ ուշ*** |
| հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուների աշխատողներ | եկամտային հարկի պարզեցված ամսական հաշվարկ՝ ստացված եկամուտների և հաշվարկված ու վճարված եկամտային հարկի վերաբերյալ | հաշվետու ամսվան հաջորդող ***ամսվա 20-ից ոչ ուշ*** | աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկման, մնացած եկամուտների վճարման ամսվան հաջորդող ***ամսվա 20-ից ոչ ուշ*** |
| ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր | տարեկան եկամուտների մասին հաշվարկ | հարկային տարվան հաջորդող տարվա ***ապրիլի 20-ից ոչ ուշ*** | հարկային տարվան հաջորդող տարվա մինչև ***մարտի 1-ը*** |

***Ուշադրություն՝*** *հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ) կայք մուտք գործելու և աշխատողների համար գրանցման հայտեր ներկայացնելու համար գործատուն (կամ գործատուի կողմից լիազորված անձը) պետք է հանդիսանա ՀՆԷՀ օգտվող (ունենա էլեկտրոնային ստորագրություն, օգտվողի անուն և գաղտնաբառ):*

Հարկային գործակալները պարտավոր են մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 20-ը բացառապես էլեկտրոնային եղանակով իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմին ներկայացնել`

• նոր աշխատողի (այդ թվում` վարձու աշխատողի) *գրանցման հայտ,* որտեղ ներառվում են *անհատական տեղեկություններ* (անուն, ազգանուն և հայրանուն, բնակության (հաշվառման) վայրի հասցե, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը),

• եկամտային հարկի և կուտակային վճարի *ամփոփ հաշվարկ,* որտեղ ներառվում են հաշվետու ամսում տվյալ հարկային գործակալից`

- եկամուտներ ստացող վարձու աշխատողների համար հաշվարկված (իսկ պայմանագրային եկամուտների դեպքում` վճարված) եկամուտների և այդ եկամուտներից պահված հարկի, իսկ կուտակային կենսաթոշակային համակարգում ներառված անձանց մասով` նաև հաշվարկված և պահված կուտակային վճարների վերաբերյալ անհատական տեղեկություններ,

- պասիվ եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց վճարված պասիվ եկամուտների և այդ եկամուտներից պահված հարկի վերաբերյալ *ամփոփ տեղեկություններ:*

Հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուների աշխատողները եկամտային հարկը հաշվարկում են յուրաքանչյուր ամիս` 21% դրույքաչափով և յուրաքանչյուր ամսվա համար, մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ը, բացառապես էլեկտրոնային եղանակով իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի և կուտակային վճարի *պարզեցված հաշվարկ,* որտեղ ներառվում են հաշվետու ամսում գործատուներից`

• եկամուտներ ստացող վարձու աշխատողների համար հաշվարկված (իսկ պայմանագրային եկամուտների դեպքում` ստացված) եկամուտների և այդ եկամուտների հանրագումարից ինքնուրույն հաշվարկված հարկի, իսկ կուտակային կենսաթոշակային համակարգում ներառված լինելու դեպքում` նաև ինքնուրույն հաշվարկված և վճարված կուտակային վճարների վերաբերյալ *տեղեկություններ,*

• ստացված պասիվ եկամուտների և այդ եկամուտների հանրագումարից ինքնուրույն հաշվարկված հարկի վերաբերյալ տեղեկություններ:

Տարեկան եկամուտների մասին հաշվարկ ֆիզիկական անձինք պարտավոր են ներկայացնել հարկային տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ից ոչ ուշ հարկային գործակալ չհանդիսացողներից ստացված եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի կողմից ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների վերաբերյալ:

Հաշվարկ կարող է չներկայացվել, եթե ստացվել է.

• «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով սահմանված նվազեցվող եկամուտ.

• հարկային գործակալի միջոցով հարկվող եկամուտ:

Տարեկան եկամուտների հաշվարկում ֆիզիկական անձը ներառում է հարկային տարվա ընթացքում հարկային գործակալների միջոցով չհարկված փաստացի ստացված եկամուտները և դրանց գծով փաստացի կատարված ծախսերը, այսինքն այդ մասով հաշվարկը լրացվում է «վճարման՝ դրամարկղային» եղանակով:

Անհատ ձեռնարկատերը ձեռնարկատիրական գործունեության մասով կիրառում է հաշվառման «հաշվեգրման» եղանակը՝ ելնելով այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Տարեկան եկամուտների հաշվարկ ներկայացնող ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը տարեկան համախառն եկամուտը կարող են նվազեցնել ձեռնարկատիրական գործունեության և քաղաքացիաիրավական պայմանագրից եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով: Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանված են ԼՂՀ կառավարության 26.12.2000թ. N 254 որոշմամբ: Անհատ ձեռնարկատիրոջ կատարած ծախսերը (այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, կապի և կոմունալ այլ ծախսերը) համարվում են ձեռնարկատիրական գործունեության գծով փաստաթղթերով հիմնավորված ծախսեր, եթե դրանք կատարվել են որպես անհատ ձեռնարկատեր:

***Ուշադրություն՝*** *եթե ձեռնարկատիրական գործունեության գծով արդյունքը բացասական է, ապա այն՝ որպես հաշվետու տարվա ձեռնարկատիրական գործունեությունից վնաս, փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 3 տարիներ և կարող է նվազեցվել միայն հետագա տարիներում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից:*

## 6. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հաշվետու տարվա ընթացքում հարկման ընդհանուր համակարգով հարկվող գործունեությունից եկամուտներ ստացող անհատ ձեռնարկատերը պարտավոր է կատարել եկամտային հարկի եռամսյակային կանխավճարներ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 20-ը: Սահմանված ժամկետներում անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկի եռամսյակային վճարման գումարների մուծումներ չկատարելու դեպքում հարկային մարմիններն այդ գումարների և դրանց գծով հաշվարկված տույժերի վերաբերյալ պահանջներ են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կանխավճարների եռամսյակային գումարները հաշվարկվում են նախորդ տարվա ընթացքում որպես անհատ ձեռնարկատեր իրականացվող հարկման ընդհանուր համակարգով հարկվող գործունեության գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի *18.75%-ի չափով:*

## 7. «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼՂՀ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Եկամտային հարկը եկամտի վճարման աղբյուրի մոտ չպահելու (չգանձելու) կամ պակաս պահելու (գանձելու) դեպքում հարկի գումարը և հարկը սահմանված ժամկետներում պետական բյուջե չվճարելու համար «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով հաշվարկված տույժերը վճարելու պարտավորությունը կրում է հարկային գործակալը:

Հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց հաշվարկված (վճարված) եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները ֆիզիկական անձանցից ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին 3 ամսվա համար, ընդ որում ամսական համախառն եկամտից պահումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել այդ եկամտի 50%-ը:

Աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստը լիազոր մարմնի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուն (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող) յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար վճարում է եկամտային հարկ ստորև բերված աղյուսակում նշված չափերով՝

| Չձևակերպված աշխատողների թվաքանակը | Հարկի չափը՝ յուրաքանչյուր չձևակերպված աշխատողների համար |
|---|---|
| 1-ից 3-ը | 60,0 հազ. դրամ |
| 4-ից 6-ը | 150,0 հազ. դրամ |
| 7-ից 9-ը | 300,0 հազ. դրամ |
| 10 և ավելի | 600,0 հազ. դրամ |

Հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի հաշվարկում օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք` ավել ցույց տրված վնասի 21 տոկոսի չափով:

Գործատուները պարտավոր են Օրենքն ուժի մեջ մտնելու պահից ֆիզիկական անձանց աշխատավարձն ավելացնել այն չափով, որպեսզի Օրենքն ուժի մեջ մտնելու պահից ֆիզիկական անձանց վճարվող փաստացի աշխատավարձը եկամտային հարկի պահումից հետո պակաս չլինի ԼՂՀ կառավարության սահմանած կարգով որոշվող մեծությունից: Եթե Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարձու աշխատողից եկամտային հարկի պահումը հանգեցրել է ԼՂՀ կառավարության 2014 թվականի հունվարի 28-ի «Մինչև «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի մեծության որոշման կարգը սահմանելու մասին» N 27-Ն որոշմամբ սահմանած կարգով որոշվող մեծության նվազման, ապա գործատուն իր միջոցների հաշվին կրում է վարձու աշխատողներին Օրենքն ուժի մեջ մտնելու տարվա յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված աշխատավարձից պահված և վճարված հարկի ամբողջ գումարի չափով լրացուցիչ պարտավորություն: Նշված պատասխանատվության միջոցը չի կիրառվում այն դեպքերում, երբ տվյալ հաստիքային միավորի համար վարձու աշխատողը փոխարինվել է տվյալ գործատուի մոտ չաշխատող այլ վարձու աշխատողով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«03» փետրվարի 2014թ. N 1

## «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ, ՕՐԵՆՔԻ 25-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 28-Ի N 27-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքն (այսուհետ` Օրենք) ուժի մեջ է մտել 01.01.2014 թվականից: Օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն` Օրենքն ուժի մեջ մտնելու պահից գործատուն իր միջոցների հաշվին կրում է վարձու աշխատողներին Օրենքն ուժի մեջ մտնելու տարվա յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված աշխատավարձից պահված և վճարված եկամտային հարկի ամբողջ գումարի չափով լրացուցիչ պարտավորություն, եթե օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարձու աշխատողից եկամտային հարկի պահումը հանգեցրել է մինչև Օրենքն ուժի մեջ մտնելը տվյալ վարձու աշխատողին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշվող մեծության նվազման:

Վերը նշված պատասխանատվության միջոցը չի կիրառվում այն դեպքերում, երբ տվյալ հաստիքային միավորի համար վարձու աշխատողը փոխարինվել է տվյալ գործատուի մոտ չաշխատող այլ վարձու աշխատողով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 28-ի N 27-Ն որոշման 1-ին կետով սահմանված ««Մինչև եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապե-

տության օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի մեծության որոշման կարգի» (այսուհետ՝ կարգ) 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ժամային կամ գործավարձային դրույքաչափերի հիման վրա հաշվարկվող աշխատավարձը որոշվում է գործատուի կողմից 2013 թվականի ընթացքում վարձու աշխատողի համար հաշվարկված աշխատավարձի (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտահարկը, վարձու աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը, ինչպես նաև կարգի 3-րդ կետով սահմանված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները) և այդ աշխատավարձի ստացման համար վարձու աշխատողի կողմից ծախսված ժամերի թվի կամ այդ աշխատավարձի ստացման համար վարձու աշխատողի կողմից կատարված աշխատանքի միավորների թվի հարաբերությամբ:

Վերը նշված որոշման կարգի 4-րդ կետի համաձայն՝ «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարձու աշխատողին հարկումից հետո՝

1. յուրաքանչյուր ամսվա համար վճարման ենթակա աշխատավարձը (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտային հարկը և կարգի 3-րդ կետով սահմանված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները) չպետք է պակաս լինի ինչպես կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ մինչև «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձից, այնպես էլ 2013 թվականի դեկտեմբեր ամսվա աշխատավարձից (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտահարկը, վարձու աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը, ինչպես նաև կարգի 3-րդ կետով սահմանված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները).

2. յուրաքանչյուր ժամի կամ աշխատանքի յուրաքանչյուր միավորի համար վճարման ենթակա աշխատավարձը (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտային հարկը և կարգի 3-րդ կետով սահմանված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները) չպետք է պակաս լինի ինչպես կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ մինչև

«եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձից, այնպես էլ 2013 թվականի ընթացքում աշխատած վերջին ժամի կամ կատարած աշխատանքի վերջին միավորի համար վճարման ենթակա աշխատավարձից (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտահարկը, վարձու աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը, ինչպես նաև կարգի 3-րդ կետով սահմանված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 178-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ վարձատրությունը, այն կախված է աշխատողի որակավորումից, աշխատանքի պայմաններից, որակից, քանակից, բարդությունից: Օրենսգրքի 187-րդ հոդվածի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, ինչպես նաև գործատուի և աշխատողի համաձայնությամբ ոչ լրիվ աշխատաժամանակի (ոչ լրիվ աշխատանքային օր կամ շաբաթ) կիրառման դեպքերում աշխատանքը վարձատրվում է փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան, իսկ 191-րդ հոդվածի համաձայն, եթե աշխատողը ոչ իր մեղքով չի կատարում աշխատանքային նորմաները, ապա աշխատանքի վարձատրությունը կատարվում է փաստացի կատարված աշխատանքի համար:

Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների (այդ թվում՝ աշխատանքի վարձատրության չափի) փոփոխման դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները:

Հաշվի առնելով վերը նշվածը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով՝ ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

1. Այն դեպքերում, երբ 2013 թվականին վարձու աշխատողի աշխատավարձը կամ դրա մի մասը ձևավորվել է որպես տոկոս՝ մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց ստացված գումարային տեսքով արդյունքի (այսուհետ՝ հաշվարկային մեծու-

թյուն) նկատմամբ, ապա վարձու աշխատողի 2014 թվականի աշխատավարձը գործատուի կողմից որոշվում է հետևյալ կերպ.

1) եթե 2013 թվականին վարձու աշխատողի աշխատավարձը ձևավորվել է որպես տոկոս՝ մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց հաշվարկային մեծության նկատմամբ, ապա աշխատավարձի վերահաշվարկը կատարելու համար պետք է ըստ լրիվ աշխատած ամիսների որոշել 2013 թվականի ընթացքում հաշվարկված աշխատավարձի (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտահարկը, վարձու աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը, ինչպես նաև կարգի 3-րդ կետով սահմանված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները) գումարների տեսակարար կշիռները հաշվարկային մեծության կազմում, որոնց նկատմամբ կիրառվել են հաշվարկային տոկոսները և դրանց հիման վրա հաշվարկել 2013 թվականի միջին հաշվարկային տոկոսը (հաշվարկային տոկոսների միջին կշռված թվաբանականը):

2014 թվականի յուրաքանչյուր ամսվա աշխատավարձը (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտային հարկը և կարգի 3-րդ կետով սահմանված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները) որոշելու համար կիրառվող հաշվարկային տոկոսը չպետք է ցածր լինի 2013 թվականի միջին հաշվարկային տոկոսի և 2013 թվականի դեկտեմբեր ամսվա նույն ցուցանիշի առավելագույնից,

2) եթե 2013 թվականին վարձու աշխատողի աշխատավարձի մի մասը ձևավորվել է որպես հաստատուն մեծություն (այսուհետ՝ բաղադրիչ 1), իսկ մյուս մասը որպես տոկոս (այսուհետ՝ բաղադրիչ 2)՝ մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց հաշվարկային մեծության նկատմամբ, ապա 2014 թվականի յուրաքանչյուր ամսվա աշխատավարձը որոշելու համար, բաղադրիչ 1-ի մասով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 28-ի N 27-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտահարկը, վարձու աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը, ինչպես նաև սույն կարգի 3-րդ կետով սահմանված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները) և 2013 թվականի դեկտեմբեր ամսվա աշխատավարձի մեծության (որը չի ներառում այդ աշխատա-

վարձի մասով հաշվարկվող եկամտահարկը, վարձու աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը, ինչպես նաև կարգի 3-րդ կետով սահմանված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները) առավելագույնին պետք է ավելացվի սույն պարզաբանման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված կարգով որոշվող տոկոսով հաշվարկված բաղադրիչ 2-ը:

2. Վարձու աշխատողի աշխատանքի ծանրաբեռնվածության փոփոխությունների (ոչ լրիվ աշխատաժամանակով կամ ոչ լրիվ դրույքով աշխատելու) դեպքերում 2014 թվականի յուրաքանչյուր ամսվա վճարվելիք աշխատավարձի վերահաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

1) եթե աշխատանքի ծանրաբեռնվածության փոփոխությունը կատարվել է 2013 թվականի ընթացքում և 2014 թվականին աշխատողը աշխատում է այդ փոփոխված ծանրաբեռնվածությամբ, ապա մինչև «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողին հարկումից հետո վճարման ենթակա պաշտոնային դրույքաչափային աշխատավարձը որոշվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 28-ի N 27-Ն որոշմամբ սահմանված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան՝ հիմք ընդունելով 2013 թվականի միայն այն ամիսները, որոնց ամբողջ ընթացքում աշխատողն աշխատել է իր վերջին ծանրաբեռնվածությամբ,

2) եթե աշխատանքի ծանրաբեռնվածության փոփոխությունը կատարվել է 2014 թվականի սկզբից կամ ընթացքում և աշխատողը 2014 թվականի ընթացքում աշխատում է այդ փոփոխված ծանրաբեռնվածությամբ, ապա 2014 թվականի յուրաքանչյուր ամսվա անվանական աշխատավարձի վերահաշվարկված մեծությունը որոշելու համար նախ պետք է հաշվարկել 2014 թվականի ծանրաբեռնվածությանը համապատասխանող աշխատավարձի անվանական մեծությունը (աշխատավարձի նախկին անվանական մեծությունը ճշգրտելով նոր ծանրաբեռնվածությամբ), և այն վերահաշվարկել այնպես, որ պահպանվի այդ անվանական մեծությունից 2013 թվականին ստացված (ստացման ենթակա) տնօրինվող աշխատավարձի մեծությունը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«03» փետրվարի 2014թ. N 2

## 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքն ուժի մեջ է մտել 01.01.2014 թվականից: Նույն պահից ուժը կորցրած են ճանաչվել «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքները:

Մինչև 01.01.2014 թվականը գործող՝ «Եկամտահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և 01.01.2014 թվականից ուժի մեջ մտնող «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների համաձայն՝

1. Ամենամյա արձակուրդի համար գործատուն վարձու աշխատողին վճարում է միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է վարձու աշխատողի միջին օրական աշխատավարձը տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով: 5-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է՝ միջին ամսական աշխատավարձը բաժանելով 21-ի, իսկ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է՝ միջին ամսական աշխատավարձը բաժանելով 25-ի:

2. Միջին ամսական աշխատավարձի չափը որոշվում է օրենքով սահմանված կարգով:

3. Այն դեպքում, երբ ձևակերպվում է վարձու աշխատողի հերթական կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախորդ տարվա չօգտագործված արձակուրդը, ապա հաշվարկված արձակուրդային գումարը ներառվում է նրա համախառն եկամտի մեջ որպես այն ամիսների ստացման ենթակա եկամուտ, որ ամիսներին նա գտնվում է արձակուրդում:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների փոխարեն 01.01.2014 թվականից «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի ուժի մեջ մտնելու հետ կապված անցման ժամանակահատվածում առաջացող հարկման հարցերի հստակեցման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով, ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

2013 թվականին առաջացած և 2014 թվականին շարունակվող վարձու աշխատողի ամենամյա արձակուրդի դեպքերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով հաշվարկված արձակուրդի գումարները հարկվում են հետևյալ կերպ՝

1) 2013 թվականին կատարվում է հետևյալ հաշվարկը՝

ա) 2013 թվականին վերաբերող ամսվա աշխատավարձին գումարվում է այդ ամսվանը բաժին ընկնող արձակուրդային գումարը և հարկվող եկամտից հաշվարկվում է եկամտահարկը և պարտադիր սոցիալական ապահովության վճարը:

Այդ դեպքում եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարները արտացոլվում են 2013 թվականի 4-րդ եռամսյակի հաշվարկում (հաշվետվությունում):

բ) Վարձու աշխատողի փաստացի արձակուրդային գումարը հաշվարկելու և վճարելու նպատակով 2014 թվականին համապատասխան ամսվանը բաժին ընկնող արձակուրդային գումարից նախնական կարգով հաշվարկվում է եկամտահարկը՝ «Եկամտահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և վարձու աշխատողի պարտադիր սոցիալական ապահովության վճարը՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2) Վարձու աշխատողի արձակուրդից վերադառնալուց հետո, 2014 թվականին վերաբերող ամսվա եկամուտը հաշվեգրելիս՝

ա) վերահաշվարկվում է 2014 թվականին բաժին ընկնող արձակուրդային գումարը՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի Աշխատանքային օրենսգիրքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի օրենքով սահմանված կարգով որոշվող միջին ամսական աշխատավարձի չափը:

բ) 2014 թվականին վերաբերող ամսվանը բաժին ընկնող վերահաշվարկված արձակուրդային գումարին գումարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 28-ի N 27-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն որոշվող այդ ամսվա աշխատավարձը և հարկվող եկամտից հաշվարկվում է եկամտային հարկը:

Այդ դեպքում եկամտային հարկի գումարը արտացոլվում է 2014 թվականի եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկ(ներ)ում:

գ) Հաշվի առնելով վարձու աշխատողի 2014 թվականին բաժին ընկնող արձակուրդային գումարից 2013 թվականին պահված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ինչպես նաև 2014 թվականի հարկվող եկամտից պահված եկամտային հարկի գումարները՝ որոշվում է վարձու աշխատողի 2014 թվականին վճարման ենթակա փաստացի աշխատավարձի չափը:

*<u>Օրինակ.</u> Կազմակերպությունը աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով և վարձու աշխատողների ամենամյա արձակուրդի օրերի քանակը կազմում է 20 աշխատանքային օր: Վարձու աշխատողի համար 2013 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև 2014 թվականի հունվարի 28-ը (ներառյալ) ծևակերպվել է ամենամյա արձակուրդ: Աշխատանքային պայմանագրի համաձայն յուրաքանչյուր ամսվա աշխատավարձը կազմել է 120 000 դրամ:*

*(դրամ)*

| Ցուցանիշը | Գումարը | Հաշվարկը |
|---|---|---|
| **Արձակուրդային գումարի հաշվարկը** | | |
| միջին ամսական աշխատավարձը | 120000 | 120000 x12:12 |
| միջին օրական աշխատավարձը | 5714 | 120000:21 |
| արձակուրդային գումարը | 114280 | 5714x20 |
| **2013 թվականի դեկտեմբեր ամսվա հաշվարկը** | | |
| աշխատավարձը | 90000 | 120000:20x15 |
| արձակուրդային գումարը | 28570 | 114280:20x5 |
| ԱՎՈՒՄ (ընդամենը) | 118570 | 90000+28570 |

| | | |
|---|---|---|
| վարձու աշխատողի սոցիալական վճարը | 3557 | 118570x3% |
| գործատուի սոցիալական վճարը | 17785 | 118570 x15% |
| սոցիալական վճարներ (ընդամենը) | 21342 | 3557+17785 |
| եկամտահարկը | 5751 | (118570-3557)x5% |
| **2014 թվականի հունվար ամսվա արձակուրդային գումարից եկամտահարկի և վարձու աշխատողի սոցիալական վճարի նախնական հաշվարկը** | | |
| արձակուրդային գումարը | 85710 | 114280:20x15 |
| վարձու աշխատողի սոցիալական վճարը | 2571 | 85710x3% |
| եկամտահարկը | 4157 | (85710-2571)x5% |
| Վճարման ենթակա 2013 թվականի դեկտեմբեր ամսվա աշխատավարձի և 2014 թվականի հունվար ամսվա արձակուրդային գումարը | 188244 | 118570-(3557+ 5751)+85710-(2571+4157) |

2013 թվականի դեկտեմբեր ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ի (118570 դրամ) և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարները (21342 դրամ) արտացոլվում են 2013 թվականի 4-րդ եռամսյակի սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ 2013 թվականի դեկտեմբեր ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ի (118570 դրամ) և եկամտահարկի (5751 դրամ) գումարները արտացոլվում են 2013 թվականի 4-րդ եռամսյակի եկամտահարկի հաշվարկում:

Վարձու աշխատողի արձակուրդից վերադառնալուց հետո, 2013 թվականին կատարվում է հաշվարկ (վերահաշվարկ): Հաշվի առնելով «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 28-ի N 27-Ն որոշման պահանջը՝ 2014 թվականի ամսական դրույքաչափը սահմանվել է 139 980 (120 000+ 120 000 x 16.65%) դրամ:

*(դրամ)*

| | | |
|---|---|---|
| **2014 թվականի հունվարի հաշվարկը (վերահաշվարկը)** | | |
| Միջին ամսական աշխատավարձ հաշվարկելիս 2013 թվականի յուրաքանչյուր ամսվա աշխատավարձին ավելացվող մեծությունը | 19980* | 120000 x16.65% |
| միջին ամսական աշխատավարձը | 139 980 | (120000+19980) x11:11 |
| միջին օրական աշխատավարձը | 6666 | 139980:21 |
| արձակուրդային գումարը | 99990 | 6666x15 |
| աշխատավարձը | 23330 | 139980:18x3 |
| ԱՎՈՒՄ (ընդամենը) | 123320 | 99990+23330 |
| Եկամտային հարկը | 25897 | 123320 x21% |
| Վերահաշվարկման արդյունքում վճարման ենթակա 2014 թվականի հունվար ամսվա վճարման ենթակա աշխատավարձը | 18441 | 123320-25897-(85710-2571-4157) |

**Միջին ամսական աշխատավարձ հաշվարկելիս 2013 թվականի յուրաքանչյուր ամսվա աշխատավարձին ավելացվող մեծությունը որոշվել է՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի Աշխատանքային օրենսգիրքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի օրենքի 8-րդ հոդվածի պահանջը:*

*2014 թվականի հունվար ամսվա համար վարձու աշխատողին վճարման ենթակա աշխատավարձը կազմում է 18441 դրամ:*

*2014 թվականի հունվար ամսվա համար հաշվարկված հարկվող եկամտի (123320 դրամ) և եկամտային հարկի (25897 դրամ) գումարները արտացոլվում են 2014 թվականի հունվար ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում:*

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ**

«03» փետրվարի 2014թ. N 3

## 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքն ուժի մեջ է մտել 01.01.2014 թվականից: Նույն պահից ուժը կորցրած են ճանաչվել «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքները:

Մինչև 01.01.2014 թվականը գործող «Եկամտահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն վարձու աշխատողներին (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի, օտարերկրացի) վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների, (բացառությամբ` հղիության և ծննդաբերության) գումարները ներառվում են նրանց համախառն եկամտի մեջ որպես այն ամիսների ստացված եկամուտներ, որ ամիսների համար այդ նպաստները հաշվարկվել են, սակայն հարկային գործակալի եռամսյակային հաշվարկում արտացոլվում են դրանց վճարման ամսվան վերաբերող սյունակում` աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված վճարումներին համապատասխանող տողում, իսկ վարձու աշխատողներին (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի, օտարերկրացի) վճարված հղիության և ծննդաբերության նպաստի գումարներից եկամտահարկ չի պահվում:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին»

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների փոխարեն 01.01.2014 թվականից «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի ուժի մեջ մտնելու հետ կապված անցման ժամանակահատվածում առաջացող հարկման հարցերի հստակեցման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով՝ ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

1. 2013 թվականին առաջացած և 2014 թվականին շարունակվող վարձու աշխատողի հղիության և ծննդաբերության արձակուրդի դեպքերում «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով վճարված նպաստի գումարները հարկվում են հետևյալ կերպ՝

ա) 2013 թվականին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա 2013 թվականին վճարված նպաստի գումարներից եկամտահարկ չի պահվում (այդ թվում՝ 2014 թվականին բաժին ընկնող ժամանակահատվածի համար):

Այդ դեպքում նպաստի գումարները չեն արտացոլվում 2013 թվականի եկամտահարկի եռամսյակային հաշվարկներում, այլ միայն արտացոլվում են 2013 թվականի պարտադիր սոցիալական ապահովության վճարների եռամսյակային հաշվետվություններում՝ այն ամսում, երբ կատարվել է վճարումը, և 2014 թվականին վերահաշվարկ չի կատարվում.

բ) 2013 թվականին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա 2014 թվականին վճարված նպաստի գումարները հարկվում են եկամտային հարկով՝ «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով (այդ թվում՝ 2013 թվականին բաժին ընկնող ժամանակահատվածի համար):

Այդ դեպքում նպաստի գումարները և եկամտային հարկը արտացոլվում են 2014 թվականի եկամտային հարկի ամսական հաշվարկներում.

գ) 2014 թվականին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության լրացուցիչ թերթիկի հիման վրա ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի համար վճարված նպաստի գումարները հարկվում են եկամտային հարկով՝ «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով (այդ թվում՝ 2013 թվականին բաժին ընկնող ժամանակահատվածի համար):

Այդ դեպքում նպաստի գումարները և եկամտային հարկը արտա-

ցոլվում են 2014թվականի եկամտային հարկի ամսական հաշվարկներում:

2. 2013 թվականին առաջացած և 2014 թվականին շարունակվող վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության (բացառությամբ` հղիության և ծննդաբերության) դեպքերում «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով վճարված նպաստի (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ) գումարները հարկվում են հետևյալ կերպ`

ա) 2013 թվականին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա 2013 թվականին վճարված նպաստի գումարները հարկվում են եկամտահարկով` «Եկամտահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Այդ դեպքում նպաստի գումարները և եկամտահարկը արտացոլվում են 2013 թվականի եկամտահարկի եռամսյակային հաշվարկներում, իսկ նպաստի գումարները` նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների եռամսյակային հաշվետվություններում` այն ամսում, երբ կատարվել է վճարումը.

բ) 2013 թվականին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա 2014 թվականին վճարված նպաստի գումարները հարկվում են եկամտային հարկով` «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Այդ դեպքում նպաստի գումարները և եկամտային հարկը արտացոլվում են 2014 թվականի եկամտային հարկի ամսական հաշվարկներում.

գ) 2014 թվականին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա վճարված նպաստի գումարները հարկվում են եկամտային հարկով` «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով (այդ թվում` 2013 թվականին բաժին ընկնող ժամանակահատվածի համար):

Այդ դեպքում նպաստի գումարները և եկամտային հարկը արտացոլվում են 2014 թվականի եկամտային հարկի ամսական հաշվարկներում:

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր հարկային
պետական ծառայության պետի
«17» փետրվարի 2014թ.
N 5-Ն հրամանի

*Ձև*

| Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի ձև | Փաստաթղթի մուտքագրման համար<br>____________________________<br>(լրացվում է հարկային մարմնի կողմից) |
| --- | --- |
| 1. Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | 2. Հարկ վճարողի (գործատուի) անվանում (անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանուն) |
| | Հայտի ներկայացման ամսաթիվ |

1) «Փաստաթղթի մուտքագրման համար» մասում նշվում է գործատուի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր) անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, [1] տողում ինքնաշխատ լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը, [2] տողում («Հարկ վճարողի (գործատուի) անվանում») տողում ինքնաշխատ լրացվում է կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

**Բաժին I. Անձնավորված տեղեկություններ**

| Հ/հ | Անուն | Ազգանուն | Հայրանուն | Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) | Ծննդյան ամսաթիվ | Անձը հաստատող փաստաթուղթ | |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| | | | | | | տեսակ | սերիա և համար |
| 1.1 | 1.2 | 1.3 | 1.4 | 1.5 | 1.6 | 1.7 | 1.8 |
| | | | | | | | |
| | | | | | | | |

2) 1.1 դաշտում ինքնաշխատ լրացվում է աշխատողի հերթական համարը

3) 1.2 - 1.4 սյունակներում լրացվում են աշխատող ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը (առկայության դեպքում)

4) 1.5 սյունակում լրացվում է անձի հանրային ծառայությունների

համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը

5) 1.6 սյունակում լրացվում է ծննդյան ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

6) 1.7 և 1.8 սյունակներում համապատասխանաբար լրացվում են ԼՂՀ-ում (ՀՀ-ում) անձը հաստատող փաստաթղթի տեսակներից որևէ մեկը՝ ԼՂՀ (ՀՀ) քաղաքացիների համար՝ ՀՀ անձնագիր, նույնականացման քարտ, մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայական, օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ ԼՂՀ-ում (ՀՀ-ում) բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ (կացության քարտ, ՌԴ քաղաքացու անձնագիր), փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ և անձը հաստատող համապատասխան փաստաթղթի սերիան և համարը

**Բաժին II. Կոնտակտային տվյալներ**

| Հեռախոսահամար | Բջջային հեռախոսահամար | Էլ. փոստ |
|---|---|---|
| 2.1 | 2.2 | 2.3 |
| | | |
| | | |

7) 2.1 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի տան (քաղաքային) հեռախոսահամարը (առկայության դեպքում)

8) 2.2 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բջջային հեռախոսահամարը (առկայության դեպքում)

9) 2.3 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում)

**Բաժին III. Հասցե և բնակության տվյալներ**
**Ենթաբաժին I. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) բնակության հասցե**

| Շրջան (Մարզ) | Համայնք | Բնակավայր | Փողոց | Շենք/տուն | Բնակարան |
|---|---|---|---|---|---|
| 3.1.1 | 3.1.2 | 3.1.3 | 3.1.4 | 3.1.5 | 3.1.6 |
| | | | | | |
| | | | | | |

10) 3.1.1 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության շրջանի (մարզի) անվանումը

11) 3.1.2 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության համայնքի անվանումը

12) 3.1.3 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակավայրի անվանումը

13) 3.1.4 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության վայրի փողոցի անվանումը

14) 3.1.5 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության վայրի շենքի կամ տան համարը

15) 3.1.6 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության վայրի բնակարանի համարը

**Ենթաբաժին II. Արտերկրի բնակության հասցե**

| Երկիր | Հասցեատող 1 | Հասցեատող 2 | Հասցեատող 3 | Փոստի համար |
|---|---|---|---|---|
| 3.2.1 | 3.2.2 | 3.2.3 | 3.2.4 | 3.2.5 |
| | | | | |
| | | | | |

16) 3.2.1 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության երկիրը (պետությունը)

17) 3.2.2 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության առաջին հասցեատողը

18) 3.2.3 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության երկրորդ հասցեատողը

19) 3.2.4 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության երրորդ հասցեատողը

20) 3.2.5 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության վայրի փոստային համարը

**Բաժին IV. Աշխատանքի մասին տեղեկություններ**
**Ենթաբաժին I. Աշխատանքային հարաբերություններ**

<table>
<tr><td colspan="3">Աշխատանքային հարաբերություններ</td></tr>
<tr><td colspan="2">Սկիզբ</td><td>Ավարտ</td></tr>
<tr><td colspan="2">4.1.1</td><td>4.1.2</td></tr>
<tr><td colspan="2"></td><td></td></tr>
<tr><td colspan="2"></td><td></td></tr>
<tr><td colspan="3">Պաշտոն</td></tr>
<tr><td>Կոդ</td><td>Սկիզբ</td><td>Ավարտ</td></tr>
<tr><td>4.1.3</td><td>4.1.4</td><td>4.1.5</td></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
</table>

21) 4.1.1 սյունակում լրացվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատողի աշխատանքի անցնելու ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

22) 4.1.2 սյունակում լրացվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

23) 4.1.3, 4.1.4 և 4.1.5 սյունակներում լրացվում են աշխատողի պաշտոնի (մասնագիտության) կոդը՝ ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 12.02.2013թ. «Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դասակարգիչ ընդունելու մասին» N 19 Ն հրամանի հավելվածի համաձայն, տվյալ պաշտոնի (մասնագիտությամբ աշխատանքի անցնելու) նշանակման և տվյալ պաշտոնից ազատվելու (մասնագիտության փոփոխության) ամսաթիվը (օրը, ամիսը, տարին): Եթե ֆիզիկական անձին վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված չէ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, ապա հաստիքային զինծառայողի դեպքում լրացվում է համակարգում զինծառայողի և դրան հավասարեցված անձի պաշտոնին տրված կոդը և ծառայության անցնելու ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

### Ենթաբաժին II. Չվճարվող արձակուրդի մասին տեղեկություններ

| Պաշտոն | Չվճարվող արձակուրդ | | Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ | |
|---|---|---|---|---|
| Կոդ | Սկիզբ | Ավարտ | Սկիզբ | Ավարտ |
| 4.2.1 | 4.2.2 | 4.2.3 | 4.2.4 | 4.2.5 |
| | | | | |
| | | | | |

24) 4.2.1 սյունակում լրացվում է աշխատողի այն պաշտոնի կոդը (ըստ՝ ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 12.02.2013թ. N 19 Ն հրամանի հավելվածի), որից աշխատողը գնացել է չվճարվող արձակուրդի

25) 4.2.2 և 4.2.3 սյունակներում լրացվում է գործատուի կողմից վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ տրամադրելու սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի

26) 4.2.4 և 4.2.5 սյունակներում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողին մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի

### Ենթաբաժին III. Քաղաքացիաիրավական հարաբերություններ

| Պաշտոն | Չվճարվող արձակուրդ | | Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ | |
|---|---|---|---|---|
| Կոդ | Սկիզբ | Ավարտ | Սկիզբ | Ավարտ |
| 4.2.1 | 4.2.2 | 4.2.3 | 4.2.4 | 4.2.5 |
| | | | | |
| | | | | |

27) 4.3.1 սյունակում լրացվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման ամսաթիվը` օրը, ամիսը, տարին

28) 4.3.2 սյունակում լրացվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի դադարեցման ամսաթիվը` օրը, ամիսը, տարին

### Ենթաբաժին IV. Պարտադիր կուտակային վճարներ կատարելը դադարեցնելու մասին տեղեկություն

| Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից պարտադիր կուտակային վճարներ կատարելը դադարեցնելու մասին գործատուին դիմելու ամսաթիվ (օր/ամիս/տարի) |
|---|
| 4.4.1 |
| |
| |

29) 4.4.1 սյունակում լրացվում է կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից պարտադիր կուտակային վճարներ կատարելը դադարեցնելու մասին գործատուին դիմելու ամսաթիվը` օրը, ամիսը, տարին

## Բաժին V. Աշխատանքի մասին նախկինում սխալ հանձնված տեղեկություններ

### Ենթաբաժին I. Աշխատանքային հարաբերություններ

| Պաշտոն | Չվճարվող արձակուրդ | | Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ | |
|---|---|---|---|---|
| Կոդ | Սկիզբ | Ավարտ | Սկիզբ | Ավարտ |
| 4.2.1 | 4.2.2 | 4.2.3 | 4.2.4 | 4.2.5 |
| | | | | |
| | | | | |

30) 5.1.1 սյունակում արտացոլվում է գործատուի կողմից վարձու

աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի կնքման կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի ընդունման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

31) 5.1.2 սյունակում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

| Պաշտոն | Չվճարվող արձակուրդ | | Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ | |
|---|---|---|---|---|
| Կոդ | Սկիզբ | Ավարտ | Սկիզբ | Ավարտ |
| 4.2.1 | 4.2.2 | 4.2.3 | 4.2.4 | 4.2.5 |
| | | | | |
| | | | | |

32) 5.1.3, 5.1.4 և 5.1.5 սյունակներում արտացոլվում են նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված աշխատողի պաշտոնի (մասնագիտության) տվյալները

## Ենթաբաժին II. Չվճարվող արձակուրդի մասին տեղեկություններ

| Պաշտոն | Չվճարվող արձակուրդ | | Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ | |
|---|---|---|---|---|
| Կոդ | Սկիզբ | Ավարտ | Սկիզբ | Ավարտ |
| 4.2.1 | 4.2.2 | 4.2.3 | 4.2.4 | 4.2.5 |
| | | | | |
| | | | | |

33) 5.2.1 սյունակում արտացոլվում է նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված աշխատողի այն պաշտոնի կոդը, որից աշխատողը գնացել է չվճարվող արձակուրդի

34) 5.2.2 և 5.2.3 սյունակներում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ տրամադրելու՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի

35) 5.2.4 և 5.2.5 սյունակներում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողին մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի

**Ենթաբաժին III. Քաղաքացիաիրավական հարաբերություններ**

| Պաշտոն | Չվճարվող արձակուրդ | | Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ | |
|---|---|---|---|---|
| Կոդ | Սկիզբ | Ավարտ | Սկիզբ | Ավարտ |
| 4.2.1 | 4.2.2 | 4.2.3 | 4.2.4 | 4.2.5 |
| | | | | |
| | | | | |

36) 5.3.1 սյունակում արտացոլվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

37) 5.3.2 սյունակում արտացոլվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի դադարեցման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

**Ենթաբաժին IV. Պարտադիր կուտակային վճարներ կատարելը դադարեցնելու մասին տեղեկություն**

| Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից պարտադիր կուտակային վճարներ կատարելը դադարեցնելու մասին գործատուին դիմելու ամսաթիվ (օր/ամիս/տարի) |
|---|
| 5.4.1 |
| |
| |

38) 5.4.1 սյունակում արտացոլվում է կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից պարտադիր կուտակային վճարներ կատարելը դադարեցնելու մասին գործատուին դիմելու՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

**39) Հարկային գործակալի (գործատուի) պատասխանատու անձի (անձանց) ստորագրություն(ներ)**

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր հարկային
պետական ծառայության պետի
«17» փետրվարի 2014թ.
N 5-Ն հրամանի

Ձև

| **ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՐԿ**<br>**Եկամտային հարկի և կուտակային վճարի անսական**<br>**____(տարի) __(ամիս)** | Փաստաթղթի մուտքագրման համար<br><br>____________________<br>(լրացվում է հարկային մարմնի կողմից) |
|---|---|
| Հարկ վճարողի անվանումը | Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)<br>☐☐☐☐☐☐☐☐ |
| Հաշվարկի ներկայացման ամսաթիվ՝ | Չափի միավոր՝ Դրամ |

1. «Փաստաթղթի համարը» մասում նշվում է հարկային մարմնում հարկային գործակալի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր) անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, «Հարկ վճարողի անվանումը» տողում ինքնաշխատ լրացվում է կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), իսկ «Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)» տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը

## Բաժին I. Գործատուի եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարների հաշվարկ` ըստ աշխատողների

| Աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) նույնականացման տվյալներ | | | Հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա (ստացված) եկամտի գումար | | | | | | Վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստներ | | | Եկամտային հարկ | Պարտադիր կուտակային վճարներ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ազգանուն | Անուն | Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) | Զբաղմունքների դասակարգչի կոդ | Կուտակային համակարգի մասնակցության կարգավիճակ | Աշխատավարձ (բազային եկամուտ) | Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի վարձատրությունը | Այլ հարկվող եկամուտը (բացի նպաստներից) | Հարկվող եկամտի նվազեցման գումար | Գործատուի միջոցներով վճարված նպաստների գումար | ԼՂՀ պետական բյուջեի միջոցներով վճարված նպաստների գումար | Ավելի վճարված նպաստի գումարի հետպահում | Հարկի գումար | Աշխատավարձից | Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի վարձատրությունից |
| 1.1 | 1.2 | 1.3 | 1.4 | 1.5 | 1.6 | 1.7 | 1.8 | 1.9 | 1.10 | 1.11 | 1.12 | 1.13 | 1.14 | 1.15 |
| | | | | | | | | ( ) | | | | | | |
| | | | | | | | | ( ) | | | | | | |
| | | | | | | | | ( ) | | | | | | |
| | | | | | | | | ( ) | | | | | | |
| | | | | | | | | ( ) | | | | | | |
| | | | | | | | | ( ) | | | | | | |
| Բաժին 1.1 Դատարանի վճռի հիման վրա կամ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով վճարված եկամուտ | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | ( ) | | | | | | |
| | | | | | | | | ( ) | | | | | | |
| Սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության ներքո գտնվող անձինք | | | | 1.16 | | | | ( ) | | | | | x | x |
| Ընդամենը | | | | | | | | ( ) | | | | | | |

2. 1-ին բաժնում տրվում է հաշվետու ամսվա համար հարկային գործակալի (գործատուի) եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարների հաշվարկը՝ ըստ բոլոր (վարձու) աշխատողների, յուրաքանչյուր (վարձու) աշխատողի համար լրացվում է մեկ տող (անկախ հաշվետու ամսում եկամուտներ ստանալու հանգամանքից)

3. [1.1], [1.2] և [1.3] սյունակներում ինքնաշխատ լրացվում են (վարձու) աշխատողի նույնականացման տվյալները. [1.1] և [1.2] սյունակներում՝ (վարձու) աշխատողի ազգանունը և անունը, [1.3] սյունակում՝ հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը)

4. [1.4] սյունակում ինքնաշխատ լրացվում է (վարձու) աշխատողի զբաղմունքի (պաշտոնի, մասնագիտության) կոդը, [1.5] սյունակում ինքնաշխատ լրացվում է կենսաթոշակային համակարգում (վարձու) աշխատողի մասնակցության կոդը (0՝ կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակից չէ, 1՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր մասնակից է, 2՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի կամավոր մասնակից է

5. [1.6] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար վարձու աշխատողին հաշվեգրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները (բազային եկամուտը), [1.7] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) դիմաց աշխատողին փաստացի վճարված եկամուտները (պայմանագրային եկամուտը), [1.8] սյունակում նշվում է (վարձու) աշխատողին վճարված [1.6] և [1.7] սյունակներում չընդգրկված և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով հարկվող այլ եկամուտները (այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափը գերազանցող առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները, աշխատողներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերից ավելի վճարված փոխհատուցման վճարները, աշխատողին վճարված օգնության գումարները), [1.9] սյունակում նշվում է հարկվող եկամտի օրենքով սահմանված չափերը չգերազանցող կամավոր կուտակային վճարների գումարները՝ ոչ ավելի, քան ([1.6]+[1.7]+[1.8]+[1.10]+[1.11])-

([1.6]+[1.7]+[1.8]+[1.10]+[1.11]):1,05

6. [1.10] սյունակում նշվում են հաշվետու ամսում գործատուի միջոցներով վարձու աշխատողին վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները, [1.11] սյունակում նշվում են հաշվետու ամսում ԼՂՀ պետական բյուջեի միջոցներով վարձու աշխատողին վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները, [1.12] սյունակում նշվում են հաշվետու ամսում հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստի վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստի հետպահվող գումարները: Յուրաքանչյուր վարձու աշխատողի համար նշված սյունակներից որևէ մեկը լրացված լինելու դեպքում լրացվում (բացվում) է հետևյալ աղյուսակը`

| Աշխատողի ազգանուն, անուն | Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) | Նպաստների և հետպահման դասակարգման կոդ | Ժամանակավոր անաշխատունակության (հետպահման) | | Նպաստի գումար կամ հետպահվող գումար | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | սկիզբ (օրը) | ավարտ (օրը) | Գործատուի միջոցներով | ԼՂՀ պետական բյուջեի միջոցներով | Հետ պահվող գումար |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | |

7. «Նպաստների դասակարգման կոդը» սյունակում նշվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստների տեսակը կամ հետպահման դեպքը (կոդը). 1 - հիվանդության նպաստ, 2 - պրոթեզավորման նպաստ, 3 - առողջարանային բուժման նպաստ, 4 - հղիության և ծննդաբերության նպաստ, 5 - ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ, 6 - ավելի վճարված նպաստի գումարի հետպահումը

8. «Ժամանակավոր անաշխատունակության (հետպահման) / սկիզբը (օրը)» և «Ժամանակավոր անաշխատունակության (հետպահման) / ավարտը (օրը)» սյունակներում նշվում են ժամանակավոր անաշխատունակության կամ հետպահման ժամանակահատվածը, ընդ որում` եթե գործատուն,

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 14-ի N 1110-Ն որոշման 5-րդ հավելվածի 9-րդ կետով սահմանված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա (բացակայում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի վերջը), ապա որպես ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի վերջ լրացվում է յուրաքանչյուր անգամ ժամանակավոր անաշխատունակության թերթիկի գործատուին ներկայացնելու օրը` առանց փոփոխելու ժամանակավոր անաշխատունակության սկիզբը

9. «Նպաստի գումարը կամ հետպահվող գումարը» սյունակում նշվում է հաշվետու ամսում ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարված գումարները կամ հաշվետու ամսում հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստի վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստի հետպահվող գումարները

10. [1.13] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում (վարձու) աշխատողի եկամտային հարկի գումարը հետևյալ հաշվարկից ելնելով`

| Հարկվող եկամուտ | Եկամտային հարկ |
|---|---|
| ([1.6]+[1.7]+[1.8]+[1.9])+([1.10]+[1.11]) | [1.13]=(([1.6]+[1.7]+[1.8]+[1.9])+([1.10]+[1.11]))x21% |

11. [1.14] և [1.15] սյունակներում ինքնաշխատ լրացվում են հաշվետու ամսվա համար վճարման ենթակա պարտադիր կուտակային վճարների գումարը հետևյալ հաշվարկներից ելնելով`

| *Կարգավիճակ* | *Եկամտի տեսակ* | *Հաշվարկ* |
| --- | --- | --- |
| կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակից չէ ([1.5]=0) | բազային և (կամ) հարկվող եկամուտ ([1.6]+[1.9])>=0, ([1.7]+[1.9])>=0 | [1.14]=0 և [1.15]=0 |
| պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր մասնակից ([1.5]=1 | միայն բազային եկամուտ ([1.6]+[1.9])>0 և [1.7]=0 | [1.14]= ([1.6]+[1.9])x5%, եթե ([1.6]+[1.9])<=500000, կամ՝ [1.14]= (([1.6]+[1.9])-500000)x10%+25000, եթե ([1.6]+[1.9])>500000, իսկ [1.15]=0 |
| | միայն հարկվող եկամուտ [1.6]=0 և ([1.7] +[1.9])>0 | [1.15]= ([1.7]+[1.9])x5% (առանց պետության մասնակցության), իսկ [1.14]=0 |
| | բազային և հարկվող եկամուտ ([1.6]+[1.9])>0 և ([1.7]+[1.9])>0 | [1.14]= ([1.6]+[1.9])x5%, եթե ([1.6]+[1.9])<=500000, կամ՝ [1.14]= (([1.6]+[1.9])-500000)x10%+25000, եթե ([1.6]+[1.9])>500000, իսկ [1.15]=([1.7]+[1.9])x5%(առանց պետության մասնակցության) |
| պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի կամավոր մասնակից ([1.5]=2 | բազային և (կամ) հարկվող եկամուտ ([1.6]+[1.9])>0 և [1.7]=0, կամ՝ [1.6]=0 և ([1.7]+[1.9])>0, կամ՝ ([1.6]+[1.9])>0 և ([1.7]+[1.9])>0 | [1.14]= ([1.6]+[1.9])x5% և [1.15]= ([1.7]+[1.9])x5% (առանց պետության մասնակցության) |

12. Բաժին 1.1-ում ըստ տողերի հարկային գործակալի կողմից անձնավորված լրացվում են դատարանի վճռի հիման վրա կամ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով վճարված աշխատավարձը, պայմանագրային եկամուտը, ժամանակավոր անաշխատունակության նպաստը: [1.16] տողում լրացվում են օրենսդրությամբ սահմանված սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության ներքո գտնվող անձանց վերաբերյալ ամփոփ (ոչ անձնավորված) տվյալները

Նշված բաժնում յուրաքանչյուր տողը (բացառությամբ [1.16] տողի) լրացված լինելու դեպքում լրացվում (բացվում) է հետևյալ աղյուսակը՝

| Ֆիզիկական անձի ազգանուն, անուն | Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) | Վճարված եկամտի դասակարգման կոդ | Հարկադիր պարապուրդի | | Քաղաքացիաիրավական հարաբերության | | Ժամանակավոր անաշխատունակության | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | սկիզբ (ամիսը, տարին) | ավարտ (ամիսը, տարին) | սկիզբ (ամիսը, տարին) | ավարտ (ամիսը, տարին) | սկիզբ (օրը, ամիսը, տարին) | ավարտ (օրը, ամիսը, տարին) |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

13. «Վճարված եկամտի դասակարգման կոդը» սյունակում նշվում է եկամտի վճարման հիմքը (կոդը). 1 – դատարանի վճռի հիման վրա աշխատանքի վերականգնման դեպքում հարկադիր պարապուրդի վճարում, 2 – դատարանի վճռի հիման վրա նպաստի վճարում, 3 – դատարանի վճռի հիման վրա այլ եկամտի վճարում, 4 –նախորդ հաշվետու ժամանակահատվածներում ավարտված քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքի կատարման) դիմաց եկամտի վճարում, 5 – նախորդ հաշվետու ժամանակահատվածներում աշխատանքից ազատված աշխատողին այլ բազային եկամտի վճարում

### Բաժին II. Հարկվող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկ

| Եկամտի և քաղաքացիության կոդ | Եկամտի ընդհանուր գումար | Դրույքաչափ (%) | Եկամուտները ստացողների թվաքանակ | Եկամտային հարկի գումար |
|---|---|---|---|---|
| 2.1 | 2.2 | 2.3 | 2.4 | 2.5 |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | Ընդամենը | |

14. 2-րդ բաժնում տրվում է հաշվետու ամսում տվյալ հարկային գործակալի կողմից բոլոր ֆիզիկական անձանց վճարված հարկվող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկը, յուրաքանչյուր եկամտի տեսակի և քաղաքացիության համար լրացվում է մեկ տող

15. [2.1] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար [2.2] սյունակում նշված եկամտի և եկամուտ ստացողների քաղաքացիության կոդը (ԼՂՀ (ՀՀ) քաղաքացի կամ օտարերկրացի՝ օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ), [2.2] սյունակում լրացվում է հաշվետու ամսվա համար հաշվեգրված այլ եկամտատեսակների գումարները (որոնք հարկվում են առանձին դրույքաչափերով), [2.3] սյունակում նշվում է ընտրված եկամտին և քաղաքացիության կոդին համապատասխանող եկամտային հարկի դրույքաչափը, [2.4] սյունակում նշվում է [2.2] սյունակում նշված եկամուտներ ստացողների թվաքանակը (հաշվարկում չի մասնակցում) և [2.5] սյունակում լրացվում է եկամտային հարկի գումարը ([2.5]=[2.2]x[2.3])

| Եկամտի տեսակ | Եկամտի կոդ | Գումարային | Եկամտի կոդ | Գումարային |
|---|---|---|---|---|
| | ԼՂՀ (ՀՀ) քաղաքացի | | Օտարերկրացի | |
| 1. Ռոյալթի | 001 | 6% | 101 | 10% |
| 2. Տոկոս | 002 | 5% | 102 | 10% |
| 3. Շահույթ | 003 | 21% | 103 | 21% |
| 4. Մրցանակ | 004 | 21% | 104 | 21% |
| 5. Նվիրատվություն, օգնություն | 005 | 21% | 105 | 21% |
| 6. Ապահովագրական հատուցում | 006 | 21% | 106 | 5% |
| 7. Գույքն օտարելու դիմաց եկամուտ | 007 | 6% | 107 | x |
| 8. Գույքի արժեքի հավելած | 008 | x | 108 | 10% |
| 9. Վարձավճար | 009 | 6% | 109 | 10% |
| 10. Փոխառության (ֆրախտի) դիմաց եկամուտ | 010 | 21% | 110 | 5% |
| 11. Ֆիզ. անձի համար ապահովագրավճար | 011 | 21% | 111 | 21% |
| 12. Կանավոր կենսաթոշակներ | 012 | 6% | 112 | 6% |
| 13. Չհիմնավորված վճարումներ | 013 | 10% | 113 | 10% |
| 14. Նվազեցման կատարման տարվան հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածում չվճարված պասիվ եկամուտներ | 014 | 10% | 114 | 10% |
| 15. ԼՂՀ-ում (ՀՀ) կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի աշխատանքի վարձատրություն | x | x | 115 | 21% |
| 16. Այլ եկամուտներ | 099 | 21% | 199 | 21% |

## Բաժին III. Ամփոփ տվյալներ

| Եկամտային հարկի գումար (հաշվարկված) | Եկամտային հարկից նվազեցվող նպաստների գումար (վճարված) | Ավելի վճարված նպաստների գումարների հետպահում | Եկամտային հարկ (վճարման ենթակա) | Պարտադիր կուտակային վճարներ (վճարման ենթակա) |
|---|---|---|---|---|
| 3.1 | 3.2 | 3.3 | 3.4 | 3.5 |
| | ( ) | | | |

16. 3-րդ բաժնում տրվում են հաշվետու ամսվա համար բոլոր (վարձու) աշխատողների եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարների հաշվարկի ամփոփ տվյալները:

